Գևորգ Էմին

Հայ ժողովրդին

Դու երգի ծո՛վ ես անափ,
Ես՝ քո մի կաթի՛լը կյանքում.
Դու ծառի բո՛ւն ես կանաչ,
Ես՝ ճյուղ, որ քեզնո՛վ է ծաղկում.

Չլիներ լի՛ճը Սևանա –
Հազի՛վ թե զրնգար Զանգուն
***
Թե չլիներ հո՛ղը քո,
Ասա՛ ինձ, ո՞ւր չոչեին,
Ո՞ր կտուրին իջնեին
Աղավնինե՛րը երգիս.

Թե չլիներ հո՛ղը քո,
Որտե՞ղ հողմից փրկվեին,
Ո՞րտեղ խարիսխ ձգեին
Առագաստնե՛րը երգիս.

Թե Արև իսկ լինեի –
Ինչի՛ս էր փառքն երկնային,
Թե լույսը քե՛զ չտայի,
Իմ հայրենի՛ք, իմ երկի՛ր...
***

Մասի ՛ս, հպա ՛րտ ես դու,
Մինչ ես ՛
Քո վշտերից կռանու՛մ եմ.
Ջահել, զվա՛րթ ես դու,
Մինչ ես
Քո հոգսերից ծերանում եմ.
Դրանից չե՞ս դու վե՛հ ու վե՛հ,
Իսկ ես տանջվու՛մ,
Սրտնեղում եմ,
Որ մի օրվա անցորդ եմ ես
Իսկ դու հավետ քո տեղու՛մ ես...
Ես քարանում եմ քո վշտից,
Դու խաղ անում աստղերի հետ...
Երանի ես լեռ լինեի
Իսկ դու Մասի ՛ս,-հայոց պոե ՛տ: